



# Առնականությունն ու գենդերային բռնությունը հայկական հեռուստասերիալներում

ԱՆԻ ԿՈՋՈՅԱՆ

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

- ✉ *Ani Kojoyan*
- ✉ *Anna Gevorgyan*
- ✉ *Center for Gender and Leadership Studies*

*Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Մյստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

Երևան 2014

# Բովանդակություն

Համառոտագիր .....	3
Ներածություն .....	5
Մեթոդաբանություն .....	7
Մեղիա և գենդերային քաղաքականություն .....	11
Առնականություն .....	13
Գենդերային բռնություն .....	18
<b>Առնականությունն ու գենդերային բռնությունը հեռուստասերիալներում ըստ սցենարիստների .....</b>	<b>26</b>
<b>Գենդերային բռնության և առնականության պատկերումը հայկական հեռուստասերիալներում .....</b>	<b>29</b>
Հեռուստադիտողները և հեռուստասերիալներում ցուցադրվող գենդերային բռնությունը .....	35
Եզրակացություն .....	43
Առաջարկներ .....	46
Հավելված .....	48
Օգտագործված գրականության ցանկ .....	55

## Համառոտագիր

Հետազոտության նպատակը հայկական հեռուստասերիալներում արտացոլված տղամարդ կերպարների վերլուծությունն է, ինչպես նաև ներկայացվող կին-տղամարդ հարաբերությունները՝ պարզելու համար, թե ինչ դեր է հատկացվում գենդերային բռնությանը առնականության համատեքստում:

Հետազոտությունը կատարվել է որակական և քանակական հետազոտական մեթոդների կիրառմամբ. Բովանդակային վերլուծության են ենթարկվել հայկական արտադրության երեք հեռուստասերիալներ, խորքային հարցազրույցներ են անցկացվել հեռուստասերիալների սցենարիստների հետ, հարցում է անցկացվել հեռուստադիտողների շրջանում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ

- Հայկական սերիալներում պատկերված տղամարդկանց մեծամասնությունը օժտված է ագրեսիվ առնականության հատկանիշներով
- Կանանց նկատմամբ բռնության գործադրումը հայկական սերիալներում ներկայացվում է որպես առնականության բաղկացուցիչ
- Կանանց նկատմամբ բռնության հակումով են պատկերված ոչ միայն բացասական, այլև դրական կերպարներ

- Հեռուստասերիալների կերպարները հանդուրժողական վերաբերմունք են ցուցաբերում ունեն կանանց նկատմամբ կիրառվող բռնությանը
- Հեռուստադիտողները ունեն խեղված պատկերացումներ բռնության մասին
- Հեռուստադիտողները հանդուրժողականություն են ցուցաբերում գենդերային բռնության նկատմամբ առհասարակ և ընտանեկան բռնությանը մասնավորապես
- Հայկական հեռուստատարադրության մեջ ընդգրկված են ոչ պրոֆեսիոնալներ, որոնք իրենց սերիալներում արտացոլում են իրենց պատկերացումները գենդերային փոխհարաբերությունների մասին

Հետազոտության արդյունքները հաշվի առնելով՝ հետազոտական խումբը հետևյալ առաջարկներն է ներկայացնում հեռուստասերիալների արտադրության մեջ ընդգրկված անհատներին ու կազմակերպություններին, ինչպես նաև հասարակական ու քաղաքական ոլորտի այն հաստատություններին, որ զբաղվում են գենդերային հիմնահարցերով.

- Սցենարներ գրելիս հաշվի առնել, որ ներկայացված կերպարներն ու միջսեռային հարաբերությունները իրենց ազդեցությունն են ունենալու հասարակության վրա:
- Բացառել գենդերային բռնությունների ընդգրկումը դրական կերպարների վարքագծում:
- Հեռուստասերիալներում գենդերային բռնության դիմող կերպարների պատկերման դեպքում, ցույց տալ սերիալի մյուս կերպարների դատապարտող, մերժող վերաբերմունքը երևույթի նկատմամբ:

- Պատկերել բռնությունը չհանդուրժող, դատապարտող կանանց ու տղամարդկանց կերպարներ:
- Հեռուստասերիալներում անդրադառնալ ընտանեկան բռնությունը քրեականացնելու անհրաժեշտությանը

## Ներածություն

Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունների և բռնությունների վերացումը դարձել է միջազգային հանրության ու միջազգային քաղաքականության ամենաարդիական խնդիրներից մեկը: Այդ են վկայում «Կանանց նկատմամբ բոլոր տեսակի բռնությունների վերացման» մասին կոնվենցիան ու դրան միացած մի քանի տասնյակ պետությունները, ՄԱԿ-ի քաղաքականության առաջնահերթություններում «Կանանց ու տղամարդկանց հավասարության» ընդգրկումը և մի շարք այլ միջոցառումներ: Միաժամանակ, կոնվենցիաներով և հոչակագրերով պայմանավորված, ողջ աշխարհում մի շարք միջոցառումներ են իրականացվում դրանց մեջ ամրագրված նպատակներին հասնելու համար: Նախատեսվող միջոցառումների ու բարեփոխումների մեջ զգալի կշիռ են կազմում «մեդիային» վերաբերող բարեփոխումները՝ հաշվի առնելով վերջինիս ունեցած հսկայական ազդեցությունը հասարակության աշխարհընկալման վրա: Եվ պատահական չէ, որ այս համատեքստում ուշադրություն է դարձվում մեդիայում սեքսիզմի, կանանց նկատմամբ խտրականության և գենդերային բռնության նվազեցմանը:

Վերոնշյալ կոնվենցիաներին միացել է նաև Հայաստանը, իսկ թե ինչ փոփոխություններ են կատարվել մեդիայում արտացոլված կանանց նկատմամբ բռնությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ կամ հակառակը, թե ինչպես են

հայկական մի շարք հեռուստասերիալներ շարունակաբար ցուցադրում բռնության տեսարաններ, փորձ է արվել վերլուծել սույն հետազոտության շրջանակներում՝ որպես հետազոտության առարկա վերցնելով հայկական արտադրության երեք հեռուստասերիալ:

Մեդիայի և հատկապես ամենաշատ դիտողականությունն ունեցող սերիալների արտացոլած գենդերային բռնությունների քանակը ուղիղ ազդեցություն է ունենում հասարակության մեջ կանանց նկատմամբ կատարված բռնությունների քանակի վրա: Ավելին, մի շարք հետազոտություններ փաստում են, որ եվրոպական այն երկրներում, որտեղ վերահսկողություն կա մեդիայում արտացոլված բռնության տեսարանների վրա, նվազել է հասարակության մեջ տեղի ունեցող բռնությունների քանակը: Եվ հակառակը՝ սերիալներում բռնության տեսարանների ավելացմանը զուգահեռ, ավելացել են նաև իրական բռնության դեպքերը: Իսկ վերջին շրջանում մամուլով տարածվող նորանոր ընտանեկան բռնությունների մասին լուրերը, որոնց մի մասը ավարտվել է մահվան ելքով, մեկ անգամ ևս փաստում է այն, որ ընտանեկան բռնությունն արդիական թեմա է մեր հասարակության համար, և որ դրա դեմ պետք է պայքարել բոլոր հնարավոր միջոցներով:

Դեռևս քսան տարի առաջ ֆեմինիստական հետազոտությունները մեծամասամբ կենտրոնանում էին կանանց կերպարների վրա: Վերջին տասնամյակներում, սակայն, բավական շատ հետազոտություններ են արվել նաև տղամարդկանց ու «առնականության» վերաբերյալ: Սույն հետազոտության շրջանակներում ևս ուսումնասիրվել է հայկական արտադրության սերիալներում պատկերվող և ներկայացվող առնականությունը, ինչպես նաև փորձ է արվել պարզել,

Թե որքանով է գեներային բնությունը պատկերվում որպես առնականության  
բաղադրիչ տարր:

# Մեթոդաբանություն

Հետազոտությունը կատարվել է որակական և քանակական հետազոտական մեթոդների կիրառմամբ: Բովանդակային վերլուծության են ենթարկվել հայկական երեք հեռուստատեսային լիցենզիայով «փրայմ թայմին» հեռարձակվող հայկական արտադրության երեք հեռուստասերիալ: Հեռուստաընկերություններն ու հեռուստասերիալներն ընտրվել են՝ հաշվի առնելով նրանց բարձր վարկանիշը հանրային դիտողականության սանդղակում: Հեռուստասերիալների վարկանիշը ցույց է տալիս, որ նրանցից ամենադիտվողը «Արմենիա» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Հարազատ թշնամի» սերիալն է, որին հետևում է «Շանթ» հեռուստաընկերության «Անցյալի սովերներ» սերիալը: Հետազոտության մեջ ընդգրկվել է նաև Հանրային հեռուստաընկերության «911» հեռուստասերիալը, որը նկարահանվել է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության հետ համագործակցությամբ: Հետազոտության ընթացքում ցուցադրվող սերիալներից յուրաքանչյուրից տասնվեցից քսանհինգ հաջորդական սերիա է դիտվել և ուսումնասիրվել:

Հաշվի առնելով հետազոտության հետազոտական հարցերը հիմնական հետազոտական խնդիրներ են դիտարկվել՝

- սերիալի/ սերիալների տղամարդ կերպարների հատկանիշները
- սերիալի/ սերիալների տղամարդ կերպարների առնականության դրսևորումները
- սերիալի/ սերիալների տղամարդ կերպարների փոխհարաբերությունները կանանց հետ



- սերիալի/ սերիալների տղամարդ կերպարների կողմից դրսևորած գենդերային բռնությունը
- սերիալի/ սերիալների կին կերպարների վերաբերմունքը գենդերային բռնությանը
- հեռուստադիտողների վերաբերմունքը կանանց նկատմամբ բռնության դիմող տղամարդկանց նկատմամբ

Հեռուստասերիալների բովանդակային վերլուծությունից զատ, հետազոտական հարցերից մեկին պատասխանելու համար կատարվել է նաև փոքրաքանակ քանակական հետազոտություն: Հետազոտության նպատակն է եղել պարզել հեռուստադիտողների վերաբերմունքը հեռուստասերիալների տղամարդ կերպարների հանդեպ: Հետազոտական քանակական մեթոդը թույլ է տվել պարզել, թե արդյոք կանանց նկատմամբ բռնություն գործադրող կերպարները դրական, թե բացասական վերաբերմունքի են արժանանում սերիալը դիտողների կողմից: Կազմված հարցաշարը ընդգրկել է հարցեր, որոնք թույլ են տվել հասկանալ, թե

- արդյոք գենդերային բռնության դիմող կերպարը սիրելի, թե մերժելի է հեռուստադիտողների կողմից
- նորմատիվ առնականության մաս է արդյոք ընկալվում կանանց նկատմամբ բռնությունը
- արդյոք ինչպիսին է բռնության ընկալումը հեռուստադիտողների շրջանում
- նորմատիվ, թե արտառոց երևույթ է ընկալվում կանանց նկատմամբ բռնությունը:

Հեռուստասերիալի մեջ ընդգրկված տղամարդ կերպարներին առնականության հատկանիշների ընտրության դրդապատճառները հասկանալու համար կատարվել

են խորքային հարցազրույցներ հեռուստասերիալի սցենարիստների հետ:

Հարցազրույցների ընթացքում բարձրացվել են այնպիսի հարցեր, ինչպես

- կերպարներին կերտելիս արդյոք փորձ է արվել իրականին մոտ, թե մտացածին հերոսներ ստեղծել
- արդյոք ինչպիսի գաղափարներ, ուղերձներ են արտահայտվում տղամարդ կերպարների միջոցով
- արդյոք ուշադրություն դարձվել է այն հանգամանքին, որ ստեղծված կերպարները կարող են օրինակելի դառնալ հեռուստադիտողների համար
- համաձայն են արդյոք, որ հեռուստասերիալները ոչ միայն արտացոլում, այլև վերարտադրում են գենդերային կարծրատիպերն ու գենդերային բռնությունը:

## Մեղիա և գենդերային քաղաքականություն

Միջազգային փորձի ուսումնասիրությունը այս բնագավառում թույլ է տալիս պնդել, որ մեղիայի և հատկապես հեռուստասերիալների միջոցով կարելի է տարածել ու հանրայնացնել մարդկային վարքի դրական մոդելներ: Բազմաթիվ երկրներ այս սկզբունքով հանրամատչելի են դարձրել այնպիսի գաղափարներ, ինչպես ապահով սեռական հարաբերությունները, սեռական վարակների կանխարգելման կարևոր միջոցառումները, հղիության արհեստական ընդհատման առողջական ու հոգեբանական բացասական հետևանքները կնոջ համար, ընտանեկան բռնության բացառման անհրաժեշտությունն ու այլ արդիական հիմնախնդիրներ: Այս քաղաքականության առաջամարտիկներից է համարվում մեքսիկացի Միգել Սաբիդոն, որը ժամանակին՝ Մեքսիկայի պետական հեռուստաընկերության տնօրենը լինելու ժամանակահատվածում, լուրջ հաջողություններ է գրանցել այս ասպարեզում<sup>1</sup>: Մասնավորապես, նա որդեգրել է հեռուստատեսությամբ դրական օրինակ-կերպարների հաճախակի ցուցադրության քաղաքականությունը, ինչի արդյունքում լուրջ դրական փոփոխություններ են տեղի ունենցել նաև մեքսիկական հասարակության մեջ: Մի շարք հետազոտություններ փաստում են, որ Սաբիդոյի վարած մեղիա քաղաքականության և մեքսիկական հասարակության մեջ ընտանեկան բռնությունների դեպքերի նվազման մեջ ուղիղ կապ գոյություն ունի: Այս նախադեպը օրինակ է հանդիսացել նաև մյուս պետությունների վարած մեղիա քաղաքականության վրա: Հատկապես զարգացող երկրները, որտեղ իրավական դաշտում կարգավորված չեն այնպիսի հանցանքներ, ինչպիսին ընտանեկան

---

<sup>1</sup> E. Babbie, *An Idea Whose Time Has Come* // Sociological Perspectives, Vol. 47, No. 4 (Winter 2004), pp. 331-338.

բոնությունն է, շատ է կարևորվում մշակութային հարթությունում հարցի լուծումներ գտնելու անհրաժեշտությունը: Այս հարցում մեծ է հատկապես հեռուստասերիալի՝ որպես ամենամեծ մասսայականությունը վայելող մեդիա ժանրի դերը: Այնպիսի երկրներ ինչպես Եթովպիան ու Ֆիլիպինները, Վենեսուելան ու Թուրքիան հենց հեռուստասերիալները որպես գործիք կիրառելով հանրայնացրել են իրենց հասարակությունների համար արդիական ու կարևոր շատ խնդիրներ:

# Առնականություն

Գենդերային ուսումնասիրությունների համատեքստում երկար տարիներ հետազոտությունները շեշտը դնում էին կնոջն ու կանացիությունը ուսումնասիրելու վրա: Մինչդեռ առնականությունը համարվում էր կարծրացած գաղափար՝ զուրկ ուսումնասիրման անհրաժեշտությունից: Գենդերային հետազոտությունների համատեքստում առնականությունը ուսումնասիրելու առաջին փորձն արել է Ավստրալիացի հասարակագետ Ռեվին Կոնելը: Նա իր հանրահայտ «Առնականություններ»<sup>2</sup> գրքում առաջ է քաշում այն տեսությունը, որ առնականությունն էլ կանացիության նման հասարակական ու մշակութային կոնստրուկտ է և որ ամեն կոնկրետ մշակույթ ու ժամանակշրջան ունի իր «հեգեմոնիկ առնականության» մոդել: «Հեգեմոնիկ առնականություն» ասելով՝ Կոնելն ի նկատի ունի առնականության «ընդունելի, ակնկալվող» մոդելը տվյալ հասարակության համար:

Ռեբեկա Ֆիզեյն էլ սոցիոլոգներից առաջինն էր, որ փորձ արեց լրացնել «մեղիայում պատկերված առնականության» մասին հետազոտությունների բացը մեղիայի մասին ուսումնասիրությունների դաշտում: Նրա «Առնականությունը և պոպուլյար հեռուստատեսությունը»<sup>3</sup> գիրքը անդրադառնում է հեռուստատեսային տարբեր ժանրերում պատկերված առնականությունների առանձնահատկություններին: Ըստ նրա՝ քանի որ հեռուստասերիալները ի սկզբանե ստեղծվում էի կին հեռուստադիտողի համար միայն, նրանցում առկա տղամարդ կերպարները պարզունակ ու անկարևոր էին: Հետագայում, սակայն, երբ

<sup>2</sup> Connel, Reawyn. *Masculinities*, Berkley and Los Angeles, California, 2005.

<sup>3</sup> Feasey, Rebecca. *Masculinity and popular television*, Edinburgh University Press, 2008.

հեռուստասերիալի արտադրության մեջ ներգրավված մասնագետների կողմից նպատակ դրվեց հեռուստասերիալները գրավիչ դարձնել նաև տղամարդ կերպարների համար, նրանցում ընդգրկվեցին «ավելի բարդ կերպարային հատկանիշներով, առնականության ընդձեռն առանձնահատկություններով» տղամարդ հերոսներ:

Հայկական առնականության մասին խոսելիս պետք է ընդծել, որ հանրային դիսկուրսում և հասարակության մեջ, առհասարակ, կա առնականության մասին պատկերացումների բաց, տղամարդկային «իդեալների» փնտրտուք: Հայաստանում, ինչպես նախկին խորհրդային մյուս երկրներում ու խորհրդային ժամանակաշրջանում տարածված առնականության մոդելը հասարակագետները համարում են «առնականության ճգնաժամ»<sup>4</sup>: Ի տարբերություն այս հասկացության արևմտյան ընկալման, որտեղ «առնականության ճգնաժամը» ի հայտ էր եկել որպես ֆեմինիստական շարժումների արդյունք, ու խորհրդային ժամանակաշրջանի երկրներում այն ընկալվում էր որպես տնտեսական ու քաղաքական համակարգի արդյունք: Սոցիալիստական տնտեսական համակարգն ու տոտալիտար քաղաքական համակարգը համարվում էին «իսկական առնականությունը» ճնշող մեխանիզմներ, առնականության տարատեսակ դրսևորումների համար խոչընդոտ հանդիսացող երևույթներ: Նորանկախ ու պատերազմի մեջ ներքաշված Հայաստանի համար տեղի ունեցավ առնականության վերաիմաստավորում, երևույթի «ազգայնականացում», երևույթի մասին ավանդական դիսկուրսի ակտիվացում: Ետպատերազմյան խորհրդային երկրների առնականության դիսկուրսի

---

<sup>4</sup> Е. Здравомыслова и А.Темкина, *Кризис маскулинности в позднесоветском дискурсе* // «О мужественности», ред. С. Ушакин, Москва, 2002.

նմանությամբ, որտեղ առնականության իդեալակն մոդել էր համարվում Մեծ հայրենական պատերազմին մասնակցած զինվոր տղամարդը, նորանկախ Հայաստանում «իսկական տղամարդու» կերպարը ասոցացվում էր ազատամարտիկի, զինվորի, մարտիկի հետ:

Հայկական հեռուստասերիալները, սակայն, ի հայտ եկան արդեն այն ժամանակշրջանում, երբ զինվորի կերպարը դոմինանտ չէր առնականության մասին հանրային դիսկուրսում, իսկ «առնականության» նոր մոդել կարծես դեռ չէր ստեղծվել: Այս համատեքստում, հետաքրքիր է դիտարկել, թե տղամարդու ինչ կերպարներ են արտացոլված հայկական հեռուստասերիալներում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանք ոչ միայն վերարտադրում, այլև հանրայնացնում ու նորմատիվային են դարձնում իրենց պատկերած հերոսներին:

Հայկական հեռուստասերիալների տղամարդ կերպարների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք կամ ուժային կառույցների ներկայացուցիչներ են, կամ բիզնեսմեններ, կամ «գողական աշխարհի ներկայացուցիչներ»: Զբաղվածության այս ոլորտները պատահական չեն ընտրված. Շեշտադրված է տղամարդկանց ուժեղ, դոմինանտ դիրք զբաղեցնող, իշխող դերը: Այս երևույթը ռուս հասարակագետ Ուշակինը բացատրում է որպես «առնականության ձևի» առկայություն՝ առանց բովանդակության<sup>5</sup>: Առնականության ձևի ցուցիչներ են հայկական հեռուստասերիալների տղամարդ կերպարներին ուղեկցող «առնական» ատրիբուտիկան՝ մեծ, շքեղ մեքենաները, ազդեցիկ դիրքը տղամարդկային շրջապատում, ընտանիքի հանդեպ վերահսկողությունը, կնոջ նկատմամբ գերակա դիրքը:

<sup>5</sup> Ушакин Сергей, *Видимость мужественности* // «О мужественности», ред. С. Ушакин, Москва, 2002.

Այս կերպարները ագրեսիվ առնականության դրսևորումներ են. Ագրեսիայի, որ արտացոլվում է ոչ միայն այլ տղամարդկանց հետ փոխհարաբերություններում, այլև ընտանիքում և հատկապես ամուսնական փոխհարաբերություններում: Այս համատեքստում կինը դառնում է միջոց, գործիք տղամարդու «առնականությունը» կերտելու, ընդգծելու, ակտիվացնելու համար: Հենց այս նպատակին են ծառայում հեռուստասերիալում պատկերված «հնագանդ», անօգնական, անաշխատանք ու անհեռանկար կանայք, որոնց ներկայությունն իսկ ավելի ցցուն է դարձնում նրանց կողքին գտնվող տղամարդկանց առնականությունը, ու ամփոփվում է ուժի, իշխանության, գերակա դիրքի մեջ:

Գենդերային բռնությունը այս համատեքստում, ագրեսիվ առնականության մաս է դառնում, հայրիշխանական հասարակության կողմից տղամարդուն վերագրվող նորմատիվային վարքագծի մաս, բաղկացուցիչ:

Հետազոտության մեջ ընդգրկված հեռուստասերիալներից երկուսում՝ «Հարազատ թշնամի» և «Անցյալի ստվերներ» հեռուստասերիալներում պատկերված տղամարդիկ մեծամասամբ ագրեսիվ առնականության կրողներ են: Նրանք իրենց առնականությունը շեշտելու, ընդգծելու համար ագրեսիվ վարք ու նվաստացնող վերաբերմունք են ցուցաբերում ոչ միայն այլ տղամարդկանց հետ շփվելիս, այլև ընտանիքում՝ կանանց հետ հաղորդակցություններում: Հեռուստասերիալների տղամարդիկ ունեն «գողական աշխարհին» հատուկ խոսելաձև, շարժում, դեմքի արտահայտություն: Նրանց առնականությունը դրսևորվում է ավելի շատ ձևի, քան բովանդակության միջոցով: Մեծ, սև մեքենաները, «գողական» շրջապատն ու իրենց ենթարկվող տղամարդկանց առկայությունը առնականության ձևի ցուցիչներ են: Այս միջավայրում տղամարդ կերպարները դրսևորում են իրենց ագրեսիվ



առնականությունը ձայնի բարձր տոնայնության, գոեհիկ խոսելաձի ու մյուսների նկատմամբ արհմարհական վերաբերմունքի միջոցով: Վերադառնալով ընտանիք՝ հեռուստասերիալների այդ հերոսները վերարտադրում են իրենց՝ հանրային կյանքի դերն ու կերպարը: Նույն՝ գողական աշխարհին հատուկ կանոններով ու ձենով են շփվում նաև իրենց կանանց, ընտանիքի մյուս անդամների հետ: Պատահական չէ, որ «Հարազատ թշնամի» հեռուստասերիալի հերոսներից մեկը իր կնոջը հաճախ դիմում է «արա՛, ընգե՛ր», «արա՛, ախպե՛ր» արտահայտություններով: Սրանով նա իր՝ ամուսին-կին փոխհարաբերությունները տեղափոխում է իր համար ավելի հասկանալի ու ընկալելի տղամարդ-տղամարդ, այն էլ գողական տղամարդկանց շփման դաշտ:

«911» հեռուստասերիալում արտացոլված տղամարդկանց առնականությունը շեշտադրվում է այնպիսի հատկանիշներով, ինչպես հոգատարությունը, անձնագոհությունը, նվիրվածությունը: Այս իմաստով, այս հեռուստասերիալի տղամարդ կերպարները հստակ տարբերվում են վերոնշյալ մյուս սերիալների կերպարներից: Անկեղծ ընկերասիրությունը, նվիրվածությունը ընկերներին, ընտանիքին, աշխատանքին ու հասարակությանը նրանց առնականության դրսևորման անբաժանելի ցուցիչներ են: Սերիալի կերպարները օժտված են կարեկցելու, հոգ տանելու, դիմացիներն արժևորելու ու գնահատելու բնավորության գծերով: Հատկանշական է, որ կերպարներից մեկը դժբախտ պատահարի զրոյունքում իր ընտանիքին կորցրած լինելով, որոշում է որդեգրել ու պահել որբացած մի աղջիկ երեխայի: Այս երեխայի հետ շփման մեջ դրսևորվում է փրկարար տղամարդու նուրբ ու հուզառատ սիրտը, հոգատար հոր ու ընտանիքին նվիրված մարդու էությունը:

Հեռուստասերիալի մյուս կերպարներից մեկը սերիալի առաջին սերիաներում դրսևորվում է որպես կնամուլ ու պճնամուլ մեկը, որ կյանքին վերաբերվում է որպես մի մեծ խաղի, ներկայացման, որից մաքսիմալ հաճույք ու զվարճանք պետք է ստանալ: Հաշմանդամություն ունեցող իր գործընկերուհու հետ շփման մեջ, սակայն, արտահայտվում են նրա այնպիսի հատկանիշները, ինչպես անձնուրաց ընկերասիրությունն ու հոգատարությունը: Սերիալի սցենարի զարգացմանը զուգահեռ նրա մոտ գերակշիռ են դառնում այս հատկանիշները և նա վերանայում է իր վերաբերմունքը կանանց նկատմամբ, սկսում ավելի պակաս արժևորել նյութեղեն ու անցողիկ արժեքները: Սցենարի այս գիծը իր կուլմինացիային է հասնում, երբ նախկինում բոլորին որպես կնամուլ հայտնի երիտասարդը մաքուր ու անբիծ սիրով սիրահարվում է ու ամուսնության առաջարկ անում հաշմանդամություն ունեցող իր գործընկերուհուն:

«ԱԻՆ 911» հեռուստասերիալը լավ օրինակ ու ցուցիչ է այն հանգամանքի, որ ցանկության դեպքում կարելի է նկարել նաև սոցիալական ուղերձներ պարունակող ու զենդերային բալանսավորված դերեր, փոխադարձ հարգանքի վրա խարսխված զենդերային փոխհարաբերություններ պատկերող ու միաժամանակ «ռեյտինգ» ունեցող հեռուստասերիալ:

## Գենդերային բռնություն

Ըստ հոգեբանների՝ բռնությունը սահմանում է կանացիության և առնականության սոցիալական սահմանները, ինչպես նաև արտացոլում կին-սողամարդ հարաբերությունները:<sup>6</sup>

Հաճախ, երբ խոսում են բռնության տեսակների մասին, հատկապես երբ խոսքը վերաբերում է գենդերային բռնությանը, շատերն անմիջապես հասկանում են միայն բռնաբարությունը, սեռական ոտնձգությունը և զուգընկերոջ կողմից կատարված բռնությունը՝ վերջիններս համարելով գենդերային բռնության հիմնական տեսակներ: Բռնության տարատեսակները, սակայն, չեն սահմանափակվում միայն վերոնշյալներով: Այսպես, գենդերային բռնությունը վերաբերում է ցանկացած տեսակի ֆիզիկական, էմոցիոնալ ճնշման, սեռական, ինչպես նաև խոսքային (վերբալ) և վիզուալ կոպտությանն ու բռնության դրսևորմանը,<sup>7</sup> որն իրականացվում է սեռերից որևիցե մեկի հանդեպ՝ անկախ դրա ուժգնության աստիճանից:

Պրոֆեսոր Քրեյմրենն առանձնացնում է մեկ այլ տեսակ ևս, այսպես կոչված՝ գենդերային ահաբեկումը, որը տեղի է ունենում այն ժամանակ, երբ սեռերից մեկի հետ վարվում են այնպես, որ վերջինս իրեն զգում է հասարակությունից առանձնացված, մեկուսացված, մարգինալացված, եզրագծից այն կողմ հայտնված, հասարակության ոչ լիարժեք անդամ, ստորացված և խոցելի: Օրինակ, հասարակական վայրերում կանանց վրա բարձրաձայն բղավելը կամ գոռալն ու

---

<sup>6</sup> J. Wood. *Gendered Lives: Communication, Gender and Culture*. 8<sup>th</sup> edition. (Wadsworth Cengage Learning, 2009), p. 285.

<sup>7</sup> Տես նշում N 1-ը, էջ 286-287:

վիրավորելը, անվայել խոսքեր ասելն ու հայհոյելը: Տվյալ պարագայում զոհի մոտ առաջանում է վախի և անապահովության զգացողություն:<sup>8</sup>

Ինչ վերաբերում է բռնաբարությանը, որը շատերի կողմից դիտվում է որպես բռնության հիմնական տեսակ, ապա, պետք է նշել, որ վերջինս սեռական ոտնձգության տեսակներից միայն մեկն է: Ըստ մասնագետների՝ չնայած բռնաբարությունը ենթադրում է սեռական հարաբերություն, ամենևին էլ պարտադիր չէ, որ այն հիմնված լինի սեռական ցանկության վրա: Քանզի, ինչպես ցույց են տվել մի շարք ուսումնասիրությունների արդյունքներ, բռնաբարության դեպքերից շատերը ագրեսիայի ցուցաբերման, անհանդուրժողականության և դիմացինի նկատմամբ բռնության կիրառման և ուժի հաստատման միջոց է միայն:<sup>9</sup>

Բռնությունը զուգընկերոջ նկատմամբ ենթադրում է ինչպես ֆիզիկական, խոսքային կամ էմոցիոնալ, այնպես էլ տնտեսական բռնության կիրառում:<sup>10</sup> Ըստ համաշխարհային վիճակագրության տվյալների՝ հարցման ենթարկված կանանց 25% և տղամարդկանց 30% բռնության կիրառումն ու առկայությունը համարում են ամուսնական կյանքի ենթադրվող և պարտադիր, իսկ երբեմն էլ անգամ դրական մի մասը:<sup>11</sup>

Ինչպես նշում է պրոֆեսոր Ջակոբսոնը, արևմտյան մշակույթում «բռնություն զուգընկերոջ նկատմամբ զուգընկերոջ կողմից» երևույթը ենթադրում է հիմնականում հետևյալ միմյանց զուգեռաբար, շղթայաբար հաջորդող քայլերը: Օրինակ՝ անձը

---

<sup>8</sup> C. Kramarae. Harassment and Everyday Life // L.F. Rakow (ed.). *Women Making Meaning: New Feminist Directions in Communication*. (New York: Routledge, 1992), pp. 100-120.

<sup>9</sup> E. Berrington, H. Jones. Reality vs. Myth: Constructions of Women's insecurity // *Feminist Media Studies*, N 2, (2002), pp. 307-323. S. Jhally, J. Katz. Big Trouble, Little Pond: Reflections on the Meaning of the Campus Pond Rapes // *UMass*, (2001 Winter), pp. 26-31.

<sup>10</sup> M. Jackman. Violence in Social Life // *Annual Review of Sociology*, N 28, (2003), pp. 387-415.

<sup>11</sup> N. Jacobson, J. Gottman. When Men Batter Women: New Insights into Ending Abusive Relationships. (New York: Simon and Schuster, 1998). M. Johnson. Gender Communication and Intimate Partner Violence // B. Dow, T. Wood. (eds). *Handbook of Gender and Communication*. (Thousand Oaks, CA: Sage, 2006).

կարող է ունենալ որոշակի խնդիրներ աշխատավայրում (կամ այլ միջավայրում), և երբ նյարդերը պրկված են և տեղի են տալիս, սկսում է հաջորդ քայլը՝ դիմացինին ճնշելը և ուժի կիրառումը: Իսկ ճնշման, բռնության և ուժի կիրառումն թե՛ էմոցիոնալ, թե՛ խոսքային տեսքով հատկապես իրականացվում է գուգրնկերոջ հանդեպ:<sup>12</sup> Ահա այս փուլում կարելի է տեսնել այն նախապայմանը, որը նախորդում է բուն բռնությանը և դրա կիրառմանը:

Հաջորդ քայլը, որ տեղի է ունենում, արդեն ֆիզիկական բռնության տարատեսակների կիրառումն է, այսինքն՝ բուն բռնությունը: Այնուամենայնիվ, սրան կարող է հաջորդել մեկ այլ քայլ ևս (թերևս ոչ միշտ), այն է՝ ներողության հայցման և զղջման փուլը, որի ժամանակ բռնություն կիրառողը խոստանում է այլևս երբեք նման վարքագիծ չցուցաբերել: Եվ սա հիմնականում կրում է շրջանի, այն է՝ հերմենևտիկ բնույթ և հաճախ հակված է կրկնվել նույն փուլերով:

Սա ոչ միայն վտանգավոր երևույթ է հենց զոհի համար, որն իր վրա կրում է բռնության անմիջական բոլոր հետևանքները, այլ նաև ընտանիքի այլ անդամների, իսկ տվյալ պարագայում՝ հատկապես երեխաների համար, որոնք գուցե և հակված կլինեն հետագայում ցուցաբերել բռնակալի նմանատիպ վարքագիծ՝ նմանակելու կրկնօրինակելու մոդելին համաձայն:<sup>13</sup> Ինչպես նշում են հոգեբաններն ու սոցիոլոգները, ընտանիքն այն կառույցն է, որտեղ մենք սովորում ենք, թե ինչն է ճիշտը, ընդունվածը և ընդունելին թե՛ ընտանեկան համատեքստում, թե՛ կին-սողամարդ հարաբերություններում: Հետագայում այն, ինչ մենք տեսել ենք մեր

---

<sup>12</sup> Jacobson (1998).

<sup>13</sup> J. Wood. Gender, Power and Violence in Heterosexual Relationships // D. Canary, K. Dindia (eds.). *Sex Differences and Similarities in Communication*, 2<sup>nd</sup> ed., (Mahwah, NJ: Erlbaum, 2006), pp. 397-411.

ընտանիքում, մեր կյանքի տարբեր փուլերում հաճախ սկսում ենք ինքներս կիրառել այն այլ միջավայրում:

Չնայած կան որոշ պնդումներ, թե կանայք նույնպես բռնություն իրականացնող-կիրառողներ են, իսկ էլ ավելի հաճախ նաև բռնություն հրահրողներ, այնուամենայնիվ, հետազոտությունները ցույց են տալիս, որ կանայք հաճախ կիրառում են բռնության միայն խոսքային միավորներ, մինչդեռ տղամարդիկ, ի տարբերություն կանանց, ավելի հակված են ֆիզիկական բռնության:<sup>14</sup> Հետաքրքիր մի փաստ ևս՝ պատմականորեն անեծքը համարվել է կնոջ խոսքային վարքագծի դրսևորման միջոց նրա զայրույթի պահերին: Այն հանդիսացել է ոչ միայն բռնության խոսքային դրսևորում, այլ նաև անիծողի համար «պայքարող և պաշտպանող միջոց», իսկ անիծելը պատմության տարբեր ժամանակահատվածներում տարբեր մշակութային տիրույթներում դատապարտվել է օրենքի տառով: Մինչդեռ հայիոյանքը հանդես է եկել որպես տղամարդու խոսքային վարքագծի դրսևորում և հաճախ ուղեկցվել են ֆիզիկական ուժի կիրառմամբ:<sup>15</sup>

Հայկական սերիալներում առկա բռնությունն իր տարատեսակներով կարող է ունենալ և շատերի պնդմամբ ունի «դաստիարակչական բնույթ». տեսնելով կարելի է սովորել, իսկ ավելի հաճախ ոչ թե սովորել, այլ կրկնապատկել արդեն իսկ առկա բռնությունն իր բոլոր դրսևորումներով:

Բռնություն կիրառողները կարող են հասարակության մեջ նպաստել ոչ միայն ոչ ճիշտ կին-տղամարդ հարաբերությունների ձևավորմանը, այլ նաև հասարակության մեջ հաճախ տղամարդու և առնականության մասին թերի կամ անհասկանալի

---

<sup>14</sup> Wood (2009), pp. 292-294.

<sup>15</sup> K. Thomas, *Religion and the Decline of Magic: Studies in Popular Beliefs in Sixteenth and Seventeenth Century England*. (London: Weidenfeld and Nicolson, 1971).

պատկերի ձևավորմանը: Ավելին, համանմանությամբ կարող է ստեղծվել կամ տարածվել սոցիալական այն կարծիքը, որ այս երկու կատեգորիաները՝ բռնությունն ու առնականությունն, ուղղակիորեն կապված են մեկը մյուսի հետ:<sup>16</sup>

Ու թեև բռնության դեպքերը կատարում են անհատները, և հենց այս անհատներն էլ պետք է իրենք կրեն պատասխանատվություն իրենց արածի համար, այնուամենայնիվ, հարկավոր է այդ դեպքերի պատճառները քննել ինչպես անհատի հոգեբանության սահմաններում, այնպես էլ անհատական իրավիճակներից այն կողմ: Սոցիալ-մշակութային մի շարք կառույցներ և ինստիտուտներ, «հանդուրժելով» ընտանեկան բռնությունը, իրականում նպաստում են դրա տարածմանը՝ այսպիսով հիմք հանդիսանալով այլասերված և անառողջ արմատների զարգացմանը հասարակության մեջ և հատկապես՝ ընտանեկան հարաբերություններում: Այս պարագայում լրատվամիջոցները ևս նպաստում են գենդերային հիմքի վրա կատարվող բռնության նորմալիզացմանը հասարակության մեջ:<sup>17</sup>

Մի շարք հետազոտությունների արդյունքներ հաստատում են, որ հեռուստատեսությամբ բռնության ցուցադրումը ուղղակիորեն կապված է կին-տղամարդ հարաբերություններում բռնության հանդեպ հանդուրժողականության ձևավորմանն ու զարգացմանն, ինչպես նաև ստանդարտացմանը և նորմալիզացմանը:<sup>18</sup> Այսպիսով, բռնության նկատմամբ, հատկապես կանանց հանդեպ բռնության նկատմամբ հանդուրժողականության տարածումը առաջացնում է բռնության նորմալիզացում, որի հետևանքով էլ հասարակության անդամները սկսում են տարբեր հարաբերություններում առկա բռնությանը վերաբերվել որպես

<sup>16</sup> Jhally (2001), p. 31.

<sup>17</sup> Wood (2009), p. 301-307.

<sup>18</sup> L. Cuklanz. *Rape on Trial: How the Media Construct Legal Reforms and Social Change*. (Philadelphia: University of Pennsylvania Press, 1996).

նորմալ երևույթի, իսկ երբեմն էլ անգամ որպես պարտադիր տարրի: Եվ նման վերաբերմունքի ձևավորման հարցում անժխտելի է հենց մեդիայի դերը:<sup>19</sup>

Հայկական սերիալներում պատկերված բռնությանը և դրանից բխող հետևանքներին պարբերաբար անդրադարձել են և դեռ անդրադառնում են հայկական մի շարք ՋԼՄ-ներ: Այսպես, 2012 թվականի մարտի 19-ին PanArmenian.Net-ը հրապարակում է առցանց հոդված, որտեղ քննարկում է հայկական սերիալների «կրթող» ազդեցության հարցը և քննադատում է բռնության տեսարանները, կնոջ իրավունքների ոտնահարումը, ծեծը, ստորացումը և հայհոյանքը, որոնք սերիալների անբաժանելի մասն են դարձել: Իսկ սերիալը դիտող ընտանիքները որդեգրում են սերիալում առկա նույնատիպ պահվածքն ու վարվելակերպը՝ համարելով այն սովորական և չդատապարտվող երևույթ:<sup>20</sup>

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կազմակերպությունը նույնպես անդրադարձել է հայկական սերիալներին և կոչ արել ձեռնարկել քայլեր՝ ուղղված հեռուստասերիալներում բռնության տեսարանների վերացմանը: Ավելին, կազմակերպությունը առաջարկել է անգամ դատապարտել սերիալներում առկա բռնությունը ոչ միայն բարոյական այլ նաև օրենքի ուժով՝ նպաստելով կին-տղամարդ առողջ հարաբերությունների մոդելի ներկայացմանը:<sup>21</sup>

---

<sup>19</sup> Ըստ «Կովկասյան հետազոտական ռեսուրս կենտրոնի» հայաստանյան գրասենյակի կատարած «Հայաստանի ՋԼՄ-ների մասին 2011թ. հասարակական կարծիքի ու նախընտրությունների հետազոտության» համաձայն՝ հայերի 81%-ն ամեն օր հեռուստացույցի առջև միջինը երեք ժամ է անցկացնում: Իսկ հայկական սերիալներ դիտում է ՀՀ բնաչության 80%-ը: Մանրամասները տես՝

[http://armfem.blogspot.com/2014/02/blog-post\\_13.html](http://armfem.blogspot.com/2014/02/blog-post_13.html) /ապրիլ 1, 2014/

<sup>20</sup> Նմանատիպ փորձով են կիրառվում նաև աշխարհի մի շարք երկրներ, այդ թվում՝ Վենեսուելան: Ըստ Վենեսուելայի նախագահի՝ Նիկոլաս Մադուրոնի, երկրում կատարվող հանցագործությունների աճին նպաստում է տեղային սերիալներում ցուցադրվող բռնությունը: Մադուրոն երկրի հեռահաղորդակցությունների նախարարին հանձնարարել է հեռուստահաղորդումների բովանդակության ուսումնասիրություն անցկացնել: Մանրամասները տես՝ <http://www.tert.am/am/news/2014/01/17/maduro-venez/> /ապրիլ 10, 2014/

<sup>21</sup> Տես՝ Հայկական սերիալները կանանց նկատմամբ բռնություն են «քարոզում» <http://www.panarmenian.net/arm/news/99385/> /ապրիլ 19, 2014/



Նույն կայքը մի քանի ամիս անց հրատարակում է մեկ այլ հոդված՝ կրկին անդրադառնալով սերիալներում կանանց և բռնության տեսարաններին: Ինչպես նշվում է հոդվածում, հայկական սերիալներից մեկում ներկայացված 730 րոպեներից 328-ը պարունակում են կանանց նկատմամբ բռնության տարաբնույթ տեսարաններ:<sup>22</sup>

Մեղիա և հաղորդակցության ոլորտի փորձագետ Գեղամ Վարդանյանը ևս իր մասնագիտական կարծիքն է հայտնել հայկական սերիալներում պատկերվող ընտանեկան բռնության վերաբերյալ: Իր հարցազրույցներից մեկում Վարդանյանը նշում է, որ, ըստ էության, սերիալները պատկերում են հայկական միջավայրն ու կենցաղային մի շարք խնդիրներ:<sup>23</sup>

Եվ չնայած ընդդեմ բռնության պարբերաբար իրականացվող ակցիաներին՝ հայկական սերիալները դեռ շարունակվում են ակտիվորեն հեռարձակվել: Իսկ բռնության խոսքային և ֆիզիկական տեսարանները, խոսքային վարքագծի սեքսիստական դրսևորումները, կանանց շարունական ճնշվածությունը շարունակում են մնալ հեռուստասերիալների անբաժան մասը: Ու թեև մասնագիտական գրականության ընթերցանությունից պարզ է դառնում, որ մեղիայում պատկերված բռնությունը ոչ թե ուղղակիորեն ծնում է հասարակության մեջ բռնություն, այլ նպաստում է արդեն իսկ գոյություն ունեցող բռնության նորմալիզացմանը, կրկնապատկմանը և դրա հետագա տարածմանը,

---

<sup>22</sup> Տես՝ «Երևանում բողոքում են սերիալներում բռնության դեմ. «Դժվար ապրուստի» 730 րոպեներից 328-ը բռնություն, լաց և դեպրեսիա է»

<http://www.panarmenian.net/arm/news/117531/> /ապրիլ 20, 2014/

<sup>23</sup> Գ. Վարդանյանը փորձագիտական վերլուծություն է ներկայացրել, որը հիմնված է եղել երկու սերիալներում հնչած մի քանի երկխոսությունների հիման վրա: Տես՝ «Ատելության խոսք, ընտանեկան բռնություն. հայկական սերիալների ուղերձները» <http://www.epress.am/2013/09/20/> ատելության-խոսք-ընտանեկան-բռնություն.html /ապրիլ 24, 2014/

այնուամենայնիվ, նշված փաստերը և նախորդ հետազոտությունների արդյունքները  
մտահոգության առիթ են տալիս:

## **Առնականությունն ու գենդերային բռնությունը հեռուստասերիալներում ըստ սցենարիստների**

Հետազոտության շրջանակներում նախատեսված էին նաև խորքային հարցազրույցներ հեռուստասերիալների սցենարիստների հետ: Նրանցից երկուսը սակայն հրաժարվեցին հարցազրույցից՝ պատճառաբանելով, թե իրենց հեռուստասերիալներում չկա գենդերային բռնություն: Իրենց այս հայատարարությամբ արդեն՝ նրանք ցույց տվեցին, որ թյուր պատկերացում ունեն բռնության մասին. Իրենց հեղինակած սերիալների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք լի են գենդերային բռնության ամենատարբեր դրսևորումներով: Նրանց հետ ունեցած հեռախոսազրույցը ցույց տվեց նաև, որ նրանք կնոջ նկատմամբ ֆիզիկական ուժ կիրառելը, նրա հետ բարձր ձայնով, գոռալով խոսելը համարում են նորմալ ու մեր հասարակության մեջ տարածված երևույթ: Ոչ պրոֆեսիոնալ լինելով՝ նրանք չեն ընկալում նաև այն հսկայական դերը, որ կարող է ունենալ հեռուստասերիալը հասարակության վրա ազդեցության տեսակետից: Մյուս կողմից էլ նրանք իրենց պատասխանատու չեն համարում իրենց հեղինակած սերիալների՝ հասարակության վրա վատ ազդեցություն ունենալու համար:

Մեզ հաջողվեց հանդիպել ու զրուցել միայն «ԱԻՆ 911» հեռուստասերիալի սցենարիստ Անահիտ Մխիթարյանի հետ, ով սիրով համաձայնեց պատասխանել մեզ հուզող բոլոր հարցերին: Նրա հետ մեր ունեցած հարցազրույցը ցույց տվեց, որ սերիալների հայկական արտադրության մեջ գոյություն չունի մշակված ընդհանուր հայեցակարգ, մեծ է անհատների ու նրանց աշխարհայացքի դերը: Կոնկրետ իր հեղինակած սերիալի մասին խոսելիս, Ա. Մխիթարյանը շեշտում էր այն մեծ

ազդեցությունը, որ ունեցել են Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, վարչության պետ Նիկոլայ Գրիգորյանը սերիալի հերոսների ստեղծման վրա: Նախարարության որդեգրած քաղաքականությունը իր ազդեցությունն է ունեցել սերիալի սցենարի վրա: Սցենարիստ-նախարարություն համագործակցության արդյունքում սերիալը ձեռք է բերել դրական արժեքներ քարոզող, սոցիալական ուղերձներ պարունակող հեռուստատարադրանք: Պետք է ընդգծել նաև այն հանգամանքը, որ այս սերիալի սցենարիստը հստակ գիտակցում էր, թե ինչ հզոր զենք կարող է լինել հեռուստասերիալը հասարակության վրա ազդեցության տեսակետից: Հաշվի առնելով այս հանգամանք ու մեծ ցանկությունը հասարակության մեջ դրական փոփոխություններ տեսնելու՝ սցենարիստը սերիալը գրելիս իր առաջ նպատակ է դրել ստեղծել «Ժամանակակից հերոսների»: Սցենարիստի հասվաստմամբ, իրենց թիմին հաջողվել է հասնել իրենց նպատակին, քանի որ սերիալի ցուցադրումից հետո բազմաթիվ դրական արձագանքներ են ստացել հեռուստադիտողներից, որոնցից ամենաարժեքավորը սցենարիստի հավաստմամբ այն է, որ «բազմաթիվ երեխաներ այսօր ուզում են փրկարար դառնալ»: Մերիալի գաղափարի ու ստեղծման պատմության մասին խոսելիս, սցենարիստը անընդհատ շեշտում էր իր նախընտրությունները կապված այս կամ այն հարցի հետ: Մեր այն հարցին, թե ինչպես է ստացվել, որ ձեր սերիալի տղամարդ կերպարները ավելի բարեհամբույր ու հարգալից վերաբերմունք ունեն կանանց նկատմամբ, քան նրանք, որ պատկերված են հայկական այլ սերիալներում, Ա. Մխիթարյանը պատասխանեց. «Որովհետև ես սիրում եմ տղամարդու այն տեսակը, որ չի ինքնահաստատվում կնոջ վրա ձեռք բարձրացնելով»:

Սցենարիստը անընդունելի համարեց բռնության տեսարանների ընդգրկումը «ընտանեկան» համարվող հեռուստասերիալներում: Ըստ նրա՝ հեռուստասերիալների արտադրության բնագավառում կա չգրված օրենք, ըստ որի յուրաքանչյուր յոթ րոպեից հետո հեռուստասերիալում պիտի էմոցիոնալ դրվագ ընդգրկել, որպեսզի հեռուստադիտողը էկրանին գամված մնա: «Ցավոք,-նշեց Միխիթարյանը,- շատերը ընտրում են ագրեսիան՝ որպես էմոցիայի աղբյուր, այնինչ կարել է նաև դրական հույզերով գրավել հեռուստադիտողին»:

Սցենարիստների հետ արված հարցազրույց/հեռախոսազրույցներից պարզ է դառնում, որ

- Սերիալները գրելիս մեծամասամբ առևտրային նպատակներ են հետապնդում
- Սերիալում արտացոլված թեմաները մեծապես կախված են սցենարիստի անհատական պատկերացումներից ու արժեքային համակարգից
- Սցենարիստների մոտ կա կարծրատիպ, որ հեռուստադիտողներին գրավում են բռնության մասին տեսարանները
- Սցենարիստներից ոչ բոլորն են պատկերացնում, թե ինչ դեր ունի հեռուստանովելը հասարակության վրա ներազդելու գործում
- Սցենարիստներից ոչ բոլորն են իրենց պատասխանատու զգում իրենց նկարահանած սերիալներում քարոզվող արժեքների հետևանքների համար:

## Գենդերային բռնության և առնականության պատկերումը հայկական հեռուստասերիալներում

Հետազոտության ենթարկված սերիալներից երկուսում՝ «Հարազատ թշնամի» և «Անցյալի ստվերներ» սերիալներում, առկա են բռնության տարաբնույթ դրսևորումներ, որոնք բոլորն էլ որպես բռնության տեսակներ նշված են հետազոտության տեսական մասում: Այսպես, օրինակ՝ պրոֆ. Ջակոբսոնի նշած «շրջանի» տեսությունն առկա է սերիալներից երկուսում, որոնցից մեկում՝ «Հարազատ թշնամի» սերիալում ամբողջապես, իսկ «Անցյալի ստվերներ» սերիալում՝ մասամբ: Օրինակ մի դրվագ «Հարազատ թշնամի» սերիալից՝ կինը [Էմիլին] փորձում է իր հորը պաշտպանել, իսկ ամուսինը [Սպարտակը] սկսում է բղավել իր հղի կնոջ վրա (ի դեպ Սպարտակի գայրույթի նախապայմանն է հանդիսանում հենց Սպարտակի և իր հոր նախորդ խոսակցությունը). «[Էմիլին] *Սու՛ս մնա, հլա դու՛ ս արի ստեղից, ասում եմ ... իմ ու քո ընտանիքի գլուխը ես եմ*»: Սկսում են վիճել, ամուսինը սկսում է վիրավորել կնոջը: Խոսակցության ընթացքում կինը վատ է զգում և ուշագնաց է լինում: Դրան հաջորդում է ամուսնու զոջման փուլը (հաջորդ), իսկ հետո նաև կնոջ կողմից հերթական ներումը: Հեռուստասերիալը միկրո և մակրո բռնությունների տարատեսակներով և դրանց դրսևորումներով (օրինակ՝ վիրավորանք, դավաճանություն, հայհոյանք, ստորացում և այլն), զոջման և ներման վայրիվերումներով շարունակվում է:<sup>24</sup>

Հաջորդը «Անցյալի ստվերներ» սերիալից է, որտեղ, ի տարբերություն վերոնշյալ օրինակի, ամուսնու զոջման փուլին, չի հետևում կնոջ ներման փուլը. կինն այս անգամ որոշում է ավելի վճռական հանդես գալ.

<sup>24</sup> Տե՛ս նաև հավելված 10-15

Ամուսին. *Եթե լեզուդ աստամներիդ տակ չպահես, գիտե՞ս չէ՛ ինչ կլինի:*

Կինը. *Կարիք չկա ամեն անգամ հիշեցնելու:*

Հաջորդ սերիայում ամուսնու կողմից կնոջ [Իզայի] նկատմամբ սպառնալիքները շարունակվում են.

Ամուսին. *Իզա խելքդ գլուխդ հավաքի, քանի դեռ գլուխդ ուսերիդ վրա ա..*

Իսկ մյուս սերիայում ամուսինը ծեծում է կնոջը, իսկ վերջինիս քեռին և քեռորդին վրեժ են լուծում իրենց փեսայից՝ ծեծի ենթարկելով նրան: Սերիայի հաջորդ հատվածում Իզայի մայրը, լսելով, որ իր փեսան աղջկան ծեծելու ժամանակ հարբած է եղել, փորձում է հարթել իրավիճակը՝ արդարեցնելով փեսային և նրա պահվածքը.

– *Պարզ է. պատճառը հենց դա է եղել: Ասա, ա՛յ աղջիկ ջան, բա մարդ խմած մարդու հետ խելք գտնի | բա հիմա ի՞նչ ենք անելու.<sup>25</sup>*

*... ախր, ինչի՞ սենց պիտի լիներ, Եղիշ ջան [դիմում է իր եղբորը], Ալեքսը խելքը գլխին, կարգին տղա էր երևում, հաստատ, ինչ արել ա, էտ խմիչքն ա արել ... :*

Այնուհետև Իզան իմանում է, որ իր բարեկամները գնացել են ամուսնու մոտ հաշվեհարդար լինելու, բարկանում է և մեղադրում վերջիններիս (իրականում վախենում է ամուսնուց): Հաջորդ քայլը կատարում է Իզայի քեռակինը՝ փորձելով խոսել իր ամուսնու հետ և «մեղմել» ստեղծված իրավիճակը.

– *Եղիշ ջան [դիմում է ամուսնուն], | էս ինքս դեմ եմ բռնությանը, էս բռնություն չեմ ընդունում, բայց բաժանվելը շատ պատասխանատու ու ճակատագրական պահ ա: Ճիշտ ա՛ Ալեքսը հարբած ա եղել, ու էս նորից եմ կրկնում, էս | էս չեմ արդարացնում ոչ մի նրա արարք, ուղղակի, Եղիշ, մեջտեղում երեխա կա, ու եթե նախկինում նման բան չի կրկնվել, եթե էս առաջին դեպքն ա, ու էտ տղան էլ ալկոհոլի*

---

<sup>25</sup> | այս նշանն օգտագործվում է խոսելու ընթացքում խոսքային դադարները ցույց տալու համար:

*խիստ ազդեցության տակ ա եղել, միգուցե | միգուցե կարելի ա էս հարցին լուծում տալ, ու շտապ որոշումներ չընդունել, հը ն՞:*

Հաջորդիվ ամուսինը փորձում է ահաբեկել կնոջը և ստիպում է հետ վերադառնալ իր մոտ ամեն կերպ՝ սպառնալիքով, վախեցնելով, կոպիտ վերաբերմունքով, իսկ ընտանիքի մյուս անդամներին դիմելով հետևյալ կերպ. «*Ես չեմ հասկանում, ձեր տանը կռիվ-վեճ չի եղել, էս ի՞նչ թատրոն եք սարքել*»: Իզայի մայրը հավելում է. «*Իզա՛, աղջի՛կս, գուցե էս անգամ իրան շանս տաս*», իսկ քեռակինն ավելացնում. «*Իզա՛ ջան, եթե էսքան գալիս ա ու էսքան պայքարում ա, ուրեմն քեզ էլ երեխային էլ սիրում ա*»: Եվ բռնության այս տեսարանն իր տարբեր դրսևորումներով և քննարկումներով շարունակվում է հաջորդ սերիաներում, չնայած այն բանին, որ կինն այդպես էլ չի ներում ամուսնուն:<sup>26</sup>

Հեռուստասերիալների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ սերիալների կին կերպարները տղամարդկանց կողմից կատարված բռնությունները արդարացնելու, դրանք որպես նորմա ընդունելու, դրանց նկատմամբ հանդուրժողականություն ցուցաբերելու հակում ունեն: Դիտարկված հեռուստասերիալներից երկուսում՝ «Հարազատ թշնամի» և «Անցյալի ստվերները» հեռուստասերիալներում առանձնահատուկ ընդգծվում է կանանց կողմից հանդուրժողական վերաբերմունքը առնականության այնպիսի դրսևորումների նկատմամբ, ինչպես հոգեբանական ու ֆիզիկական բռնությունը կանանց նկատմամբ: Բռնությունը ընկալվում է որպես սովորական երևույթ, փորձ է արվում ամեն կերպ արդարացնել բռնարարին:

---

<sup>26</sup> Տե՛ս հավելված 1-10



«911» հեռուստասերիալում վերաբերմունքը բռնության դիմող տղամարդու նկատմամբ էականորեն տարբերվում է այլ սերիալներում արտացոլված վերաբերմունքից: Առհասարակ, այս սերիալում քիչ են գենդերային բռնության այնպիսի դրսևորումները, ինչպես կնոջ նկատմամբ ֆիզիկական ու հոգեբանական բռնությունը, նրա անձն ու անհատականությունը վիրավորող գործողությունները: Սերիաներից մեկում սակայն ( սերիա 8) ընտանեկան բռնության տեսարան է պատկերված, որտեղ հստակ երևում է սերիալի հեղինակների վերաբերմունքը ընտանեկան բռնության, բռնարար տղամարդու ու այդ բռնարարությունը հանդուրժող կնոջ նկատմամբ: Սերիան սկսվում է Արտակարգ իրավիճակների նախարարություն ստացված ահազանգով գազի արտահոսքի վերաբերյալ: Փրկարար ջոկատը, սակայն, պարզում է, որ ահազանգը կեղծ է եղել, իսկ նրա հեղինակը անչափահաս մի տղա է: Տունը զննելուց ու գազի արտահոսքի մասին վկայող որևէ փաստ չարձանագրելուց հետո, փրկարարներից մեկը՝ երիտասարդ տղամարդ նկատում է չափազանց մտահոգ ու տխուր երեխային: Տանից դուրս գալուց հետո փրկարարը որոշում է սպասել մի քանի րոպե ու նորից այցելել այդ բնակարան՝ պարզելու համար երեխայի անհանգստության պատճառը: Այստեղ դրսևորվում է տղամարդ կերպարի հոգատար, մարդասեր ու բարի վերաբերմունքը երեխայի՝ անձանոթ երեխայի նկատմամբ: Մի քանի րոպե անց փրկարարները ականատես լինում, թե ինչպես այդ ընտանիքի հայրը ծեծի է ենթարկում երեխայի մորը՝ անասելի ֆիզիկական ու հոգեբանակն ցավ պատճառելով ոչ միայն իր կնոջը, այլև իր դեռահաս որդուն: Փրկարարներն անմիջապես միջամտում են, ազատում կնոջը բռնարարի ձեռքից ու փորձում նրան հասկացնել իր արարքի անընդունելի ու դժբախտ հետևանքներով հղի լինելու հանգամանքը: Այս տեսարանում հստակ հակակրանք է

երևում բռնություն կիրառող տղամարդու նկատմամբ, հակակրանքը դրսևորվում է թե՛ կին, թե՛ տղամարդ կերպարների վարքագծում: Ուշագրավ է, որ փրկարարներից մեկը՝ հասկանալով, որ տղա երեխան կեղծ ահազանգ կատարելով, փորձել է փրկել մորը իր հոր բռնություններից, ասում է. « Ապրես, դու իսկական տղամարդու պես ես վարվել»: Այս դրվագում առնականության մասին պատկերացումը բնութագրվում է հոգատարության ու բռնությունից ազատելու, բռնությունը կանխելու մասին դիտարկումներով: Բռնարարի վարքը դատապարտող հայացքներով ու դատապարտող խոսքով են հեղինակները օժտել այս սերիայի բոլոր կերպարներին: Հատկանշական է սակայն, որ ամենից անհանդուրժող վերաբերմունքը ցուցաբերում է փրկարարների ջոկատի միակ կին աշխատակիցը: Նա, չկարողանալով զսպել իր խոր հակակրանքը բռնություն գործադրողի նկատմամբ, ապտակ է հասցնում նրան: Այս դրվագը մի քանի հետաքրքիր դիտարկումներ անելու առիթ է տալիս: Նախ, ի տարբերություն այլ սերիալների, այս սերիալի հեղինակները հստակ բացասական վերաբերմունք են ցուցադրել բռնության դիմող տղամարդու նկատմամբ: Մյուս կողմից, սակայն, նրան դատապարտելու, նրան «պատժելու» գործառույթը թողել են անհատների վրա և չեն պատկերել նրա արարքի «քրեորեն պատժելի» լինելու հանգամանքը: Չկան նաև կնոջը ուղղված խորհուրդներ՝ կապված նրա իրավունքների հետ, չկա ինֆորմացիա ՀՀ-ում գործող բազմաթիվ հ/կ-ների մասին, որոնք զբաղվում են կանանց իրավունքների պաշտպանությամբ ու ընտանեկան բռնության ենթարկված կանանց հոգեբանական և առողջական վերականգնման հարցերով: Այն, որ բռնությունը հանդուրժել չի կարելի և որ պետք է ուժ գտնել ու հեռանալ բռնարարից, արտահայտվում է երեխայի շուրթերով, նրա՝ մորն ուղղված կոչերով, որ

չի ուզում ապրել մի տանը, որտեղ իր մայրը բռնության է ենթարկվում և որ պետք է անհապաղ հեռանալ այդ տանից:

Սերիալի այս դրվագում պատկերված ընտանեկան բռնությունը հստակ վերաբերմունք է արտահայտում և՛ բռնարարի, և՛ բռնարարին դատապարտողների նկատմամբ: Այսպիսի դրվագների առկայությունը, անկասկած միայն դրական ազդեցություն կարող է ունենալ հասարակության՝ ընտանեկան բռնության վերաբերյալ պատկերացումների վրա:

Գենդերային բռնության հետաքրքիր դրսևորում կա պատկերված այս սերիալի կերպարներից մեկի՝ Վարդանի կյանքի համատեքստում: Վարդանի միջոցով սերիալի հեղինակները պատկերել են գենդերային բռնության այն տարատեսակը, որի մասին շատ ավելի քիչ է խոսվում մեր հասարակության մեջ: Խոսքը վերաբերում է տղամարդու նկատմամբ կնոջ կողմից իրագործվող հոգեբանական բռնությանը: Վարդանը տղամարդ կերպարի մի տեսակ է, որ պարբերաբար ստորացուցիչ ու նվաստացուցիչ վիրավորանքների է ենթարկվում իր կնոջ կողմից՝ հարուստ չլինելու ու ընտանիքը «լավ» չպահելու համար: Սերիալի սկզբի մի քանի սերիաներում անընդհատ շեշտվում է Վարդանի կնոջ՝ իր ամուսնուն ուղղված անհարկի հոգեբանական ճնշումները: Այս գույգի փոխհարաբերություններն ավելի են բարդանում երեխայի առկայության պատճառով, քանի որ երեխայի մոտ էլ հոգեբանական բարդույթ է առաջանում սիրելի հոր և սիրելի հորը անընդհատ վարկաբեկող մոր չավարտվող վեճերի պատճառով: Հետաքրքիր է, բայց սերիալի հեղինակները այս անգամ էլ ամենախոհեմ ու շիտակ մոտեցմամբ են օժտել հենց երեխային, որ կարծես շատ ավելի իմաստուն ու խորաթափանց հոգի ունի, քան իր ծնողները: Նրա շուրթերով, սերիալի հեղինակները ցույց են տալիս, որ լավ հայր

լինելը չի նշանակում շատ փող ունեցող հայր լինել և որ քիչ աշխատավարձ ստացող, բայց նվիրված ու սիրող հայրն էլ կարող է «աշխարհի ամենալավ հայրը լինել»: Բարդ այս փոխհարաբերությունները հանգուցալուծվում են փրկարար Վարդանի սխրանքով. Վարդանը կնոջ ու աղջկա աչքերի առջև փրկում է իր դստեր համադասարանցիներին հրո ճարակից ու դառնում դպրոցի, դպրոցի աշխատակիցների ու ծնողների հերոսը: Համընդհանուր հարգալից ու ակնածանքով վերաբերմունքը իր ամուսնու ու նրա աշխատանքի նկատմամբ, փոխում է նաև Վարդանի կնոջ վերաբերմունքը: Այստեղ մեր հասարակության մեջ առկա երկու կարծրատիպեր են դրսևորվում՝ մեկը ջարդվում է, մյուսը վերարտադրվում: Առաջին կարծրատիպը վերաբերում է նրան, որ ցածր աշխատավարձով տուն պահող տղամարդը չի կարող հարգված ու ընդունված լինել: Սերիալի այս դրվագում, փշրվում է այս կարծրատիպը, և պետական ցածր աշխատավարձով ապրող, իր ընտանիքին շոպյություններ չպարգևող տղամարդը ներկայանում է համընդհանուր հարգանքի ու սիրո արժանացած «հերոսի» կարգավիճակով: Վերարտադրվող կարծրատիպն էլ այն մասին է, որ հասարակության վերաբերմունքը անհատի նկատմամբ փոխում է իր նկատմամբ նաև իր հարազատների վերաբերմունքը:

## Հեռուստադիտողները և հեռուստասերիալներում ցուցադրվող գեղերային բռնությունը

Հետազոտական հարցերից մեկին պատասխանելու համար համապատասխան հարցում է անցկացվել հեռուստասերիալներում կնոջ/ կանանց և տղամարդու/ տղամարդկանց կերպարի, առնականության և բռնության վերաբերյալ: Հարցումն անցկացվել է՝ ընդգրկելով տարբեր տախիքային խմբերի՝ 16-25, 26-35, 35-ից բարձր անձանց: Հարցման մեջ ներգրավվել են թե՛ արական, թե՛ իգական սեռի տարբեր կրթական աստիճան ունեցող 150 անձ:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ.

- հարցվածների ընդամենը 3-5% է կարծում, որ հեռուստասերիալները չեն արտացոլում մեր հասարակության իրական պատկերը, քանի որ «մեր հասարակության մեջ կին-տղամարդ փոխհարաբերությունները ավելի լավ վիճակում են գտնվում, քան սերիալում է ներկայացված»:
  - Չնայած այն բանին, որ հարցվածներից բոլորը նշում են, որ երկու հեռուստասերիալների («Հարազատ թշնամի», «Անցյալի ստվերներ») գլխավոր հերոսները հակված են բռնության և կոպտության, այնուամենայնիվ, նրանց մեծ մասը դիտարկում է գլխավոր հերոսներին որպես համակրելի և սիրելի կերպարներ:
  - Հարցվածների մեծամասնությունն (85%) առնականությունը բնութագրող հատկանիշ է համարում՝
- ❖ կոպտությունը, որ հատկապես կարող է ցուցաբերվել սիրած աղջկա կամ կնոջ նկատմամբ (հատկապես խանդի կամ անվստահության պահերին)

- ❖ համառությունը, հպարտությունը և չորությունը. հարցվածների զգալի մասը վերջիններս նույնացնում են նպատակասլացության, սկզբունքայնության և կամքի ուժի հետ
- ❖ վճռականությունը, տաքարյունությունը և խենթությունը. վերոնշյալի հետ համանմանությամբ վերջիններս նույնացվում են սիրելու, նվիրվելու և անկեղծ լինելու հետ
- ❖ խիզախությունը, խանդոտ վարքագիծը, կովելու-պայքարելու ցանկությունն ու հատկությունը
- ❖ արտաքին և ձայնային տվյալները<sup>27</sup>

Ըստ հարցման արդյունքների ամփոփման՝ առանձնացվել են նաև այն հիմնական պատճառները, որոնք կարող են տղամարդու կողմից կնոջ հանդեպ բռնություն կատարելու պատճառ հանդիսանալ հեռուստասերիալներում՝

- ❖ Խանդը (նաև սերը) սիրած էակի նկատմամբ
- ❖ Կնոջը չափից դուրս սիրելը
- ❖ Կնոջ սուտը
- ❖ Կնոջ հակաճառելն ամուսնուն (հիմնականում կենցաղային հարցերում)
- ❖ Կնոջ կողմից ամուսնուն «անիմաստ» հարցեր տալը
- ❖ «Տղամարդ» երևալու և ինքնահաստատվելու ցանկությունը
- ❖ Կնոջ անպատասխանատվությունը և ոչ ճիշտ քայլերը և պահելաձևը, օրինակ՝ *«մունաթ դեմքի արտահայտությունը, դիմացինի նյարդերի վրա ազդելը»*
- ❖ Կնոջ կամ քրոջ անհնազանդ լինելը (օրինակ՝ քրոջ անձանոթ մարդու հետ խոսելը կամ զանգելը, ուշ տուն գալը)

<sup>27</sup> Առնականությունը բնութագրող հատկանիշները ներկայացված են ըստ հարցումների տոկոսային հարաբերության՝ շատից քիչ սկզբունքով:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները տղամարդու կողմից կնոջ հանդեպ բռնություն կատարելու հիմնական պատճառը կամ դրդապատճառը հենց կինն է համարվում:

Հետաքրքիր մի փաստ ևս. հարցվածներից մեկը նկատում է, որ հեռուստասերիալում *«բոլորն էլ [կանայք], հիմնականում չեն աշխատում, տնային տնտեսուհիներ են, ազատ ժամանակ շատ ունեն ու հիմնականում նյարդեր են քայքայում և զայրացնում տղամարդկանց»:*

Այսպիսով, այստեղ ևս մեկ գիծ է ի հայտ գալիս. բռնության հակում ունեցող «առնական» տղամարդու կողքին պատկերված է բավականին թույլ կնոջ կերպար, որը չի աշխատում, տնային տնտեսուհի է, ամուսնուց կախյալ վիճակում է գտնվում, շատ է խոսում, ամուսնու նյարդերն է քայքայում և հաճախ իր իսկ դեմ կատարվող բռնության դրդապատճառն է հանդիսանում:

Հարցման արդյունքները ցույց են տալիս նաև, որ հեռուստադիտողները ոչ միայն հանդուրժողականություն են ցուցաբերում գենդերային բռնության նկատմամբ, այլև հաճախ բռնություն չեն համարում ակնհայտ բռնարարքները: Հեռուստադիտողներից մեկի հավաստմամբ.

*«Մերիալներում բռնություն չկա, կա հայ տղամարդուն հարիր արարքներ»:*

Հարցման մասնակիցներից շատերի պատասխանները ցույց են տալիս, որ «առնականություն» և «բռնություն» տերմինները խեղաթյուրվում ու հաճախ նույնականացվում են:

Իսկ որպես բռնության տեսակներ հարցված-հեռուստադիտողների կողմից նշվել և առանձնացվել են հետևյալները՝

- ❖ Ապտակ, հարված և ծեծ (մարմնական/ ֆիզիկական բռնություն)
- ❖ Վիրավորանք, գոռգոռոց և հայիռյանք (վերբալ/ բառային)
- ❖ Հոգեբանական ճնշում
- ❖ Առևանգում, բռնաբարություն և մահափորձ

Հարցման արդյունքների ամփոփումը ցույց է տալիս նաև, որ հեռուստասերիալում առկա բռնության տեսակները կամ դրվագները նորմալիզացվում են հեռուստադիտողների կողմից: Հարցվածներից մեկն անգամ նշում է. «... լինում է, որ, օրինակ, *Սպարտակը* («Հարազատ թշնամի» հեռուստասերիալ) իր *կնոջ վրա գոռում է կամ հարվածում պահի տակ, բայց ես չեմ որակի դա որպես բռնություն*»: Կապված հեռուստասերիալային հաջորդող դրվագի հետ ևս կարծիքները միասնական չեն եղել. հարցվածների ավելի քան կեսը կարծում է, որ նման դրվագները, ինչպիսին է օրինակ հետևյալը, երբ ապագա սկեսրայրը խոսում է իր ապագա հարսի մասին՝ «*Հարսդ ու՞րա, ախչի՛, | ես դրա հերն եմ անիծել, | եթե դրա տերը տղետ ըլնի, աշխատանքի էլ կգնա | ես դրա տիրոջը ...*», բնավ էլ, կնոջ իրավունքների ոտնահարում չէ: Ավելին, ինչպես նշում է հարցված-հեռուստադիտողներից մեկը՝ «*ուղղակի մարդ է, դե մի բան է ասել ... իր ապագա ամուսնու հայրն է, կարող էր և ասել*»: Նման մի տեսարան ևս կրկին նույն սերիալից. կինը [Ռենան] ուզում է ամուսնու [Յուրիի] սիրուհուն տեսնել: Ի պատասխան սրա՝ նրա սկեսրայրը ասում է. «Ռենա՛, դու խելոք կին ես, ոչ սազական բաներ մի՛ արա»: Եվ կրկին հարցվածների մեծամասնությունը սա համարում է սովորական երևույթ: Ահա թե ինչպես է պատասխանել հեռուստադիտողներից մեկը հարցման ընթացքում. «*Կարծում եմ, մեր օրերում հաճախ հանդիպող երևույթ է [դավաճանության մասին է խոսքը], ուրիշ պատասխան չէր էլ կարող սկեսրայրը տալ իր հարսին*»: Հարցված-հեռուստադիտողների մեծ մասը



(շուրջ 90%) նաև կարծում է, որ հեռուստասերիալները ամբողջությամբ կամ մասամբ արտացոլում են հայ իրականության մեջ առկա մոդելը՝ կին-տղամարդ փոխհարաբերություններում տղամարդու դոմինանտ դիրքն ու իշխանությունը, և կնոջ հնազանդությունն ու ենթակա լինելը: Մինչդեռ հարցվածների միայն 8% է կարծում, որ հայկական հեռուստասերիալները ամեննին էլ չեն արտացոլում իրականությունը, որովհետև կին-տղամարդ հարաբերությունները խեղաթյուրված կամ առնվազն չափազանցված են ներկայացված սերիալներում:<sup>28</sup>

Ըստ հարցման, ի հակառակ առնական կերպարի նկարագրի, հեռուստասերիալի պակաս առնակական կամ թույլ տղամարդ կերպարներ են համարվում նրանք, ովքեր (օրինակ «Հարազատ թշնամի» սերիալի հերոսներից մեկի թիկնապահ-վարորդ Կորյուն Վլադիմիրովիչը, կամ հերոսներից մեկ ուրիշը՝ Միքայելը), ովքեր, ըստ հարցվածների, ունեն «կնոջը վայել կամ տիպիկ խոսքային, կամ վարքագծային բնութագիր»: Այսպես, օրինակ, ինչպես նշում է հարցվածներից մեկը, «Հարազատ թշնամի» սերիալի հերոսներից մեկը՝ վերոնշյալ Կորյուն Վլադիմիրովիչը, բնորոշվում է որպես կանացի կերպար, քանզի վերջինս ունի «կնոջը հատուկ բամբասելու հատկանիշ», կամ Միքայելը, որ «ունակ չէ իր հարսնացուին իր բուռը պահել և զուրկ է տղամարդկային հատկանիշներից»: Հարցվածների մի մասն էլ կարծում է, որ առհասարակ թույլ տղամարդ կերպարների շարքում նրանք են, ովքեր էմոցիոնալ են, թուլամորթ և կնոջ նման նեղացկոտ: Այսպիսով, ստացվում է, որ, ըստ հարցվածների, սերիալային ամենաթույլ կերպարների շարքում են ամենաչեզոք կերպարները, որոնք հակված չեն բռնություն կիրառել կնոջ նկատմամբ: Ավելին, նրանց նեղացկոտ կամ հարաբերականորեն թույլ լինելը մեկնաբանվում է որպես կանացի հատկանիշ:

---

<sup>28</sup> Հարցվածների մնացած մասը (1-2%) դժվարացել են պատասխանել այդ հարցին:

Այսպիսով, վերոնշյալ փաստերը և վերլուծությունը թույլ են տալիս եզրակացնել , որ հեռուստադիտողների կողմից մեծամասամբ արդարացվում է սերիալներում կանանց նկատմամբ բռնությունն իր տարատեսակներով , իսկ բռնություն կատարող տղամարդ-կերպարների մեծ մասը համակրելի կերպար է դիտվում հեռուստադիտողի կողմից: Հարցվածներից մեկն անգամ ասել է. *«Ճիշտ է՝ Տիգրանը («Անցյալի ստվերներ») բռնկուն է, անհամբեր, ու անգամ եղբորն է սպանել, բայց դե միտումնավոր չէ: Մեղմ է ... ու համակրելի»:*

Ըստ վերոնշյալ փաստերի ամփոփման և վերլուծության՝ տղամարդու կողմից կնոջ հանդեպ բռնություն կատարելիս հաճախ ընդգծվում է կնոջ մեղավորությունը: Կինը համարվում է բռնության դրդապատճառ կամ բռնություն սերմանող: Ու թեև ոչ միշտ է բռնությունն արդարացվում հարցված-հեռուստադիտողների կողմից, այնուամենայնիվ, վերջիններիս մեծ մասն իրենց անթաքույց համակրանքն են արտահայտում հեռուստասերիալի այն տղամարդ-կերպարների հանդեպ, որոնք, ըստ իրենց, առնական են, որոնք միաժամանակ այն կերպարներ են, որ նաև հակված են բռնության: Ավելին, հաճախ բռնությունը դիտարկվում է առնականություն ենթադրող տարրերից մեկը: Այսպիսով, հեռուստասերիալային համատեքստում բռնությունը սկսվում է երբեմն դիտարկվել որպես առնականության «հոմանիշ»:

## Եզրակացություն

Բազմիցս խոսվել և գրվել է այն մասին, որ հեռուստասերիալներում, այդ թվում՝ հայկական, կան մի շարք վտանգավոր տարրեր. այն է՝ դրանցում անընդմեջ ցուցադրվող բռնության տեսարանները, որոնք կարող են «կրթող» կամ «դաստիարակչական բնույթ» ունենալ հասարակության անդամների և հատկապես նոր ձևավորվող սերնդի ներկայացուցիչների վրա՝ ձևավորելով և ամրապնդելով կարծրատիպեր և ոչ ճիշտ արժեհամակարգ: Կանանց ուսումնասիրությամբ և իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի շարք կառույցներ շարունակաբար անդրադառնում են հայկական սերիալներում կանանց հանդեպ իրականացվող բռնության տեսարաններին: Ինչպես նշում է «Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք» ՀԿ նախագահ Մամիկոն Հովսեփյանը, հասարակության մեջ կարծրատիպ է ձևավորվում, կամ ամրապնդվում է արդեն իսկ գոյություն ունեցողը, թե իսկական տղամարդը հենց այնպիսին պիտի լինի, ինչպիսին պատկերված է հեռուստասերիալում, այն է՝ բռնի և կոպիտ, հաճախ նաև հանցավոր, իշխանասեր և այլն, իսկ աղջիկների մոտ էլ այն կարծրատիպը, թե վերջիններս հաճախ պետք է լինեն հանդուրժող կամ ներողամիտ իրենց նկատմամբ կատարվող բռնության նկատմամբ:<sup>29</sup> Այնուամենայնիվ, առ այս պահը ո՛չ հայկական սերիալների թիվն է կրճատվել, ո՛չ հայկական սերիալներում ցուցադրվող բռնության տեսարանների որակն ու քանակը: Ավելին, ըստ մի շարք հեռուստասերիալների սցենարիստների,

---

<sup>29</sup> Մանրամասների համար տես՝ «Երկնագույն Էկրանի ուժը. հայկական սերիալները կնոջ դեմ բացասական կարծրատիպեր են ձևավորում» <http://blog.britishcouncil.org/nane/?p=396&lang=en> /մայիս 1, 2014/:

իրենց կողմից գրված սերիալներում բռնության ոչ մի դրսևորում կամ դրվագ չկա:<sup>30</sup>  
Վերջիններս հաճախ նաև խուսափում են լրագրողներին կամ հետազոտողներին  
հարցազրույցներ տալուց:

Մեր կողմից ուսումնասիրվող երկու հեռուստասերիալի («Հարազատ թշնամի»  
և «Անցյալի ստվերներ») գրեթե բոլոր կանայք (թվենք մի քանիսի անունը միայն՝  
Էմիլի, Բաբի, Լիլիթ, Ագնես, Ժակլին, Ռենա, Վարդուշ և այլոք «Հարազատ թշնամի»  
սերիալից, կամ օրինակ հետևյալները «Անցյալի ստվերներ» սերիալից՝ Մարիամ, Իզա,  
Սոնա, Շաքե, Աստղիկ և այլոք) տնային տնտեսուհիներ են, գրեթե ամեն  
ներկայացվող սերիայում իրենց դժբախտ են զգում, անընդմեջ լացում են և դժգոհում,  
նրանց բոլորի ընտանիքներում անընդմեջ տիրում է վեճ և անախորժություն, հաճախ  
ենթարկվում են ստորացման (հրապարակայնորեն կամ առանձին), ինչպես նաև՝  
ֆիզիկական բռնության:

Հեռուստասերիալներում բռնության տեսարանները պատկերված են  
բռնության տարատեսակներով՝ արհամարհանք, հայհոյանք, ստորացում,  
ահաբեկում, ինչպես նաև ֆիզիկական բռնության բազում տեսակներ:

Ըստ կատարված հետազոտության՝ հեռուստասերիալներում գերակշռում է  
վերբալ/ բառային բռնությունը (այդ թվում հրապարակայնորեն նսեմացնելը,  
ստորացնելը կամ հայհոյելը), որն իր հերթին հասարակության անդամների կողմից ոչ  
միշտ է դիտարկվում որպես բռնություն կամ բռնության տեսակ: Սպառնալիքը կամ  
վերբալ ճնշում գործադրելը հաճախ նույնպես չի դիտարկվում որպես բռնություն.  
օրինակ՝ «Հարազատ թշնամի» հեռուստասերիալում տղան խոսում է իր ընկերուհու

---

<sup>30</sup> «Հարազատ թշնամի» և «Անցյալի ստվերներ» հեռուստասերիալի սցենարիստների հետ  
հեռախոսազրույցի ժամանակ վերջիններս պնդեցին, որ իրենց սերիալներում բռնության դրվագներ  
չկան:

մասին. « ... Լիլիի ոտերը ջարդելու եմ / *հագար անգամ ասեցի, որ էտ կախարդին մեր տեղը չասեր ...* »: Վերջինս հարցվածների մեծ մասի կողմից անգամ բռնության սպառնալիք չի դիտարկվում: Եվ ինչպես հետազոտության տեսական մասում է նշված, մեղիան իր հետ բերում է նորմալիզացում՝ սերմանելով հանդուրժողականություն մի շարք երևույթների, այդ թվում՝ բռնության (ինչպես նաև դրա մի շարք տարատեսակների) նկատմամբ: Նույնը լսելով և անընդմեջ էկրանին տեսնելով կամ դիտելով, հասարակության անդամները սկսում եմ դիտարկել իրավիճակը որպես բնական կամ սովորական, չդատապարտող երևույթ:

Սույն հետազոտության արդյունքները ցույց են տալիս նաև, որ հասարակության մեջ առկա կարծրատիպերը կին-տղամարդ հարաբերության վերաբերյալ, ինչպես նաև բռնության դրսևորման-կիրառման հետ կապված ավելի են ամրապնդվում հենց հեռուստասերիալների միջոցով: Հարցվածների մեծ մասը դիտում է հեռուստասերիալներում առկա իրավիճակը նորմալ և առօրեական երևույթ:

# Առաջարկներ

Ամփոփելով հետազոտության արդյունքները, ինչպես նաև վերոնշյալ փաստերն ու վերլուծությունը, հետազոտական խմբի անդամները հետևյալ առաջարկներն են ներկայացնում.

- Սցենարներ գրելիս հաշվի առնել, որ ներկայացված կերպարներն ու միջսեռային հարաբերությունները իրենց ազդեցությունն են ունենալու հասարակության վրա:
- Բացառել գենդերային բռնությունների ընդգրկումը դրական կերպարների վարքագծում:
- Հեռուստասերիալներում գենդերային բռնության դիմող կերպարների պատկերման դեպքում, ցույց տալ սերիալի մյուս կերպարների դատապարտող, մերժող վերաբերմունքը երևույթի նկատմամբ:
- Պատկերել բռնությունը չհանդուրժող, դատապարտող կանանց ու տղամարդկանց կերպարներ:
- Հեռուստասերիալներում անդրադառնալ ընտանեկան բռնությունը քրեականացնելու անհրաժեշտությանը:

Հետազոտական խումբը առաջարկում է նաև հետազոտության արդյունքները հաշվի առնելով հայկական հեռուստասերիալներում կանանց նկատմամբ բռնությունը դատապարտող ու արգելող քաղաքականություն որդեգրել շահագրգիռ հասարակական կազմակերպություններին, հանրային հեռուստատառադիոնորմերի պետական հանձնաժողովին, ինչպես նաև ՀՀ-ի պետական այն կառույցներին, որոնք կոչված են պետական մարմինների

ուշադրության ներքո պահել գենդերային հիմնախնդիրները և մասնակցել դրանց կարգավորմանը և հաղթահարմանը: Նման մարմիններ են.

- Նախագահին կից կանանց խորհուրդ
- Գենդերային թեմատիկ խումբ
- Գենդերային բռնության դեմ պայքարի

միջգերատեսչական հանձնաժողով:<sup>31</sup>

---

<sup>31</sup> Այս մարմինների մասին մանրամասն տե՛ս՝ Ալինա Պողոսյան, «Գենդերային դիսկուրսը և գենդերային քաղաքականության հեռանկարները Հայաստանում, հասանելի հետևյալ հասցեով [http://www.osf.am/wp-content/uploads/2013/12/Policy-Paper\\_alina-Poghosyan.pdf](http://www.osf.am/wp-content/uploads/2013/12/Policy-Paper_alina-Poghosyan.pdf)

# Հավելված

*Անցյալ ստվերներ* (Շանթ հեռուստաընկերություն)

1.



2.





3.



4.



5.



6.



7.



8.



9.



*Հարազատ թշնամի (Արմենիա հեռուստաընկերություն)*

10.



11.



12.



13.



14.



15.



## Օգտագործված գրականության ցանկ

- Գրիգորյան, Լ., Ադամյան, Մ., Ղալումյան, Ա. (2012). *Կնոջ կերպարը հայաստանյան գովազդում* // [http://www.osf.am/wp-content/uploads/2013/12/Advertising\\_research.pdf](http://www.osf.am/wp-content/uploads/2013/12/Advertising_research.pdf) /ապրիլ 30, 2014/
- *Կնոջ կերպարը մեդիայում* // [http://armfem.blogspot.com/2014/02/blog-post\\_13.html](http://armfem.blogspot.com/2014/02/blog-post_13.html) /ապրիլ 30, 2014/
- Միրաքյան, Վ. (2011) Ագրեսիվ սոցիալական դիրքորոշումների ձևավորումը լրատվամիջոցներով // «21-րդ դար», N 5 (39) [http://www.noravank.am/upload/pdf/05.Vahram%20Miraqyan\\_21\\_dar\\_05\\_2011.pdf](http://www.noravank.am/upload/pdf/05.Vahram%20Miraqyan_21_dar_05_2011.pdf) /ապրիլ 30, 2014/
- Վարդանյան. Գ. *Ատելության խոսք, ընտանեկան բռնություն. Հայկական սերիալների ուղերձները* // <http://www.epress.am/2013/09/20/ատելության-խոսք-ընտանեկան-բռնություն.html> /ապրիլ 30, 2014/
- Berrington, E., Jones, H. (2002). Reality vs. Myth: Constructions of Women's insecurity // *Feminist Media Studies*, N 2, pp. 307-323.
- Connell, R. (1987). *Gender and Power. Society, the Person and Sexual Politics*. Cambridge: Polity Press.
- Cuklanz, L. (1996). *Rape on Trial: How the Media Construct Legal Reforms and Social Change*. Philadelphia: University of Pennsylvania Press.

- DeFrancisco, V., Palczewski, H. (2007). *Communicating Gender. A Critical Approach*. University of Northern Iowa.
- Dow, B. (1996). *Prime-time Feminism*. Philadelphia: University of Pennsylvania Press.
- Gevorgyan, S. (2011). *Either Watch or Complain? Low-quality Soap Operas on Armenian TV Continue to Draw Criticism*.  
[http://www.armenianow.com/features/32674/armenia\\_first\\_channel\\_soup\\_opera\\_a\\_nna\\_/սսսրիլ](http://www.armenianow.com/features/32674/armenia_first_channel_soup_opera_a_nna_/սսսրիլ) 30, 2014/
- Jackman, M. (2003). Violence in Social Life // *Annual Review of Sociology*, N 28, pp. 387-415.
- Jacobson, N., Gottman, J. (1998). *When Men Batter Women: New Insights into Ending Abusive Relationships*. New York: Simon and Schuster.
- Jhally, S., Katz, J., (2001). Big Trouble, Little Pond: Reflections on the Meaning of the Campus Pond Rapes // *UMass*, Winter, pp. 26-31.
- Johnson, M. (2006). Gender Communication and Intimate Partner Violence // B. Dow, T. Wood. (eds). *Handbook of Gender and Communication*. Thousand Oaks, CA: Sage.
- Kramarae, C. (1992). Harassment and Everyday Life // L.F. Rakow (ed.). *Women Making Meaning: New Feminist Directions in Communication*. New York: Routledge.
- Neale, S. (1983). "Masculinity as Spectacle: Reflections on Men and Mainstream Cinema" // *Screen* 24, 6, (2-16).



- Sutherland, John C., Siniawsky, Shelley J. (1982). "The Treatment and Resolution of Moral Violations on Soap Operas" // *Journal of Communication*. Vol. 32/ 2, (pp. 67-74).
- Thomas, K. (1971). *Religion and the Decline of Magic: Studies in Popular Beliefs in Sixteenth and Seventeenth Century England*. London: Weidenfeld and Nicolson.
- US Bureau of Justice Statistics Crime Data Brief (2003). *Intimate Partner Violence, 1993-2001*.  
<http://www.bjs.gov/content/pub/pdf/ipvus.pdf> /ушпнл 30, 2014/
- Wood, J. T. (2007/ 2009). *Gendered Lives: Communication, Gender and Culture*. Belmont, CA: Thompson/ Wadsworth.
- Wood, J. (2006). Gender, Power and Violence in Heterosexual Relationships // D. Canary, K. Dindia (,ds.). *Sex Differences and Similarities in Communication*, 2<sup>nd</sup> ed., Mahwah, NJ: Erlbaum.
- Е.Здравомыслова и А.Темкина, "Кризис маскулинности в позднесоветском дискурсе" в сбор. «О мужественности», ред. С. Ушакин, Москва, 2002
- Ушакин Сергей, «Видимость мужественности», в сбор. «О мужественности», ред. С. Ушакин, Москва, 2002